ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2 հուլիսի 2020 թվականի N 1148-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան

2020 թ. հուլիսի 9
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության
2020 թվականի հուլիսի 2-ի
N 1148-Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է կորոնավիրուսի տնտեսական հետևանքները մեղմելու համար աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման (սուբսիդիան տրամադրվում է իրավաբանական անձանց) կամ փոխհատուցման միջոցով՝ նպաստել ագրոտնտեսական բարձր ցուցանիշներով օժտված սերմերի հասանելիության ապահովմանը, բերքատվության բարձրացմանը, ցանքաշրջանառության խթանմանը և ցանքատարածքների ավելացմանը՝ նաև չմշակվող

հողերի օգտագործման միջոցով, արդյունքում տեղական աշնանացան ցորենի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը:

Ներկայումս գյուղացիական տնտեսությունները յուրաքանչյուր հաջորդ տարվա ցորենի ցանքի համար օգտագործում են նախորդ տարվա ցորենի բերքի մի մասը, որը չի ապահովում անհրաժեշտ բերքի ծավալ: Գյուղացիական տնտեսությունների կողմից նման վարքագիծը բացատրվում է որակյալ սերմնացու ձեռք բերելու համար ֆինանսական միջոցների բացակայությամբ: Ուստի ծրագիրը հետապնդում է երկու նպատակ՝

ա. ապացուցել, որ որոշակի ֆինանսական ներդրման և որակյալ սերմնացու օգտագործելու պարագայում ցորենի արտադրությունը կարող է լինել շահութաբեր գործունեություն,

բ. փոխել գյուղացիական տնտեսությունների վարքագիծը՝ հնարավորություն տալով պետության կողմից ստացված աջակցության շրջանակներում ձեռք բերված ապացուցողական փորձի հիման վրա, յուրաքանչյուր տարի ստացված բերքի օտարումից գոյացող սեփական ֆինանսական միջոցների հաշվին պլանավորել հաջորդ տարվա համար որակյալ սերմնացուի ձեռքբերման ֆինանսավորումը:

2. Հաշվի առնելով վերոնշյալը՝ ծրագիրը նախատեսվում է իրականացնել սահմանափակ ժամկետով գյուղացիական տնտեսություններում որոշակի շրջանառու միջոցների առաջացման նպատակով՝ որպես վերջնարդյունք ունենալով ոչ թե ցորենի սերմնացուի ձեռքբերման աջակցությունը, այլ արդյունավետ գյուղատնտեսության զարգացումը: Նշվածով պայմանավորված՝ ծրագրի հիմնական նպատակներից է նաև ցանքաշրջանառության զարգացումը, այն է՝ աջակցությունը տրամադրել անմշակ կամ նախորդ տարվա ընթացքում ցորենի ցանք չիրականացրած հողատեսքերի մշակման համար: Ծրագիրը կիրականացվի 2020 և 2021 թվականներին Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Արագածոտնի, Տավուշի և Կոտայքի մարզերում, քանի որ նշված մարզերում ցորենի ցանքատարածությունները կազմում են Հայաստանի Հանրապետության ընդհանուր ցորենի ցանքատարածությունների 90%-ից ավելին (կամ շուրջ 54 հազար հա): Ծրագրի արդյունքներով պայմանավորված՝ ծրագիրը կարող է շարունակվել նաև 2022 թվականին:

3. Ծրագրի մասնակիցներն են՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).

2) սույն ծրագրի 2-րդ կետում նշված մարզերի մարզպետարանները (այսուհետ՝ մարզպետարան).

3) սերմերի վաճառք իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր (այսուհետ՝ մատակարար).

4) գյուղատնտեսությունում տնտեսավարողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր (այսուհետ՝ շահառու):

4. Ծրագրի շահառուներ կարող են լինել սույն ծրագրի 2-րդ կետում նշված մարզերում՝ 2-20 հա մակերեսով ցորենի ցանքատարածություններ մշակող տնտեսավարողները, ընդ որում՝ ծրագրի շրջանակում յուրաքանչյուր շահառուի կողմից ձեռք բերվող սերմերի հանրագումարը չի կարող գերազանցել 7000 կգ-ը (1 հա-ի հաշվով առավելագույնը՝ 350 կգ):

5. Մատակարարը, բացի սերմերի վաճառքից, կարող է սույն ծրագրի 4-րդ կետին համապատասխան ցանք կատարել՝ իր կողմից արտադրված և (կամ) ներմուծված սերմերով: Շահառուն նույնպես կարող է ներմուծել սերմեր՝ սույն ծրագրի 4-րդ կետին համապատասխան ցանք կատարելու համար:

6. Ծրագրի շրջանակում շահառուներին նախարարության կողմից կտրամադրվի անվճար խորհրդատվություն՝ ցորենի մշակության ցանքաշրջանառության կիրառման վերաբերյալ:

7. Ծրագրի շրջանակում ձեռքբերված սերմերով պետք է պարտադիր ցանք կատարվի մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը:

8. Սուբսիդավորման կամ փոխհատուցման ենթակա են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի N 1479-Ն որոշման համաձայն հավաստագրված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2292-Ն որոշմամբ տնտեսական օգտակարության պետական սորտափորձարկում անցած և օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում գրանցված (Աղյուսակ 1) ու աշնանը գրանցվող «Բեզոստայա 100» և «Ալեքսեիչ» սորտերի էլիտա և (կամ) 1-ին վերարտադրության սերմերի վաճառքի գինը, ինչպես նաև մատակարարի (արտադրված և ներմուծված) և շահառուի (ներմուծված) կողմից ցանք կատարելու համար ձեռք բերված սույն կետում նշված սորտերի սերմերի գինը:

9. Սուբսիդավորման կամ փոխհատուցման գործընթացը կիրականացնի նախարարությունը: 1 կգ-ի համար տրվող սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարը սահմանվում է 70 դրամ, իսկ ծրագրի շրջանակում սերմ ներմուծած և սերմերի ներմուծման ավելացված արժեքի հարկով հարկվող շահառուների և մատակարարների համար՝ լրացուցիչ ևս 20 դրամ, ինչը հնարավորություն կտա շահառուներին մատչելի պայմաններով՝ շուկայական գնից առավել ցածր գնով, ձեռք բերել որակյալ սերմեր և ցանք կատարել (սուբսիդավորման կամ փոխհատուցման 70 դրամի և լրացուցիչ 20 դրամի սահմանումը պայմանավորված է բարձրորակ սերմերի համար պարենային ցորենի իրացման գնից ոչ շատ բարձր և սերմերի շուկայական գնից ցածր գին ապահովելու հանգամանքով):

(9-րդ կետը փոփ. 27.05.2021 թիվ 871-Լ որոշում)

10. Մարզպետարանները մինչև տվյալ տարվա հուլիսի 15-ը ճշգրտում են ըստ համայնքների սերմացուի նախնական պահանջարկը (սորտերի անվանումը, սերմերի քանակը, նախատեսվող ցանքատարածությունը) և ներկայացնում նախարարություն:

11. Ծրագրին մասնակցելու համար մատակարարները մինչև տվյալ տարվա հուլիսի 20-ը դիմում են նախարարություն՝ ներկայացնելով սույն ծրագրի 8-րդ կետում առաջարկվող սորտերը, նախատեսվող քանակները և նախարարության հետ կնքում հուշագիր, որի արդյունքում ձևավորվում է մատակարարների տվյալների բանկ:

12. Նախարարությունը մինչև տվյալ տարվա հուլիսի 22-ը նախարարության կայքում հրապարակում է մատակարարների վերաբերյալ տեղեկությունները (անվանումը/անունը, ազգանունը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը(ները) և այլն):

13. Մարզպետարաններից ստացված սերմացուի պահանջարկի վերաբերյալ տեղեկությունները նախարարությունը մինչև տվյալ տարվա հուլիսի 22-ը տրամադրում է մատակարարներին:

14. Մատակարարները ծրագրի շրջանակում վաճառք պետք է իրականացնեն միայն ծրագրի 2-րդ կետում նշված մարզերում ցանք կատարելու համար: Շահառուները ծրագրի շրջանակում սերմ կարող են ձեռք բերել միայն նախարարության կողմից հրապարակված ցանկում ընդգրկված մատակարարներից (բացառությամբ, երբ շահառուն է ներմուծում՝ ցանք կատարելու համար):

15. Մատակարարները ծրագրի շրջանակում սերմերի վաճառքը պետք է իրականացնեն տվյալ տարվա հուլիսի 27-ից մինչև հոկտեմբերի 15-ը: Շահառուները և մատակարարներն իրենց կողմից ցանք կատարելու համար սերմերի ներմուծումը պետք է կատարեն մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 15-ը:

16. Ծրագրի շրջանակում սերմերի վաճառքն իրականացվում է բացառապես պայմանագրային հիմունքներով (պայմանագրի օրինակելի ձևը մշակում է նախարարությունը և մինչև տվյալ տարվա հուլիսի 27-ը հրապարակում նախարարության կայքում): Պայմանագիրը պետք է լինի եռակողմ՝ շահառուի, մատակարարի և նախարարության միջև:

17. Մատակարարը վաճառված սերմերի յուրաքանչյուր խմբաքանակի համար շահառուին տրամադրում է հավաստագրերի պատճենները:

18. Ծրագրի շրջանակում վաճառված սերմերի որակի համար պատասխանատվությունը կրում է մատակարարը, իսկ շահառուի կողմից ներկրված սերմերի դեպքում՝ շահառուն:

19. Մինչև գնումը շահառուն կարող է իրականացնել սերմերի որակի փորձաքննություն՝ սեփական միջոցներով: Արդյունքների անհամապատասխանության դեպքում շահառուն կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մատակարարից պահանջել փորձաքննության համար պահանջված ծախսերը:

20. Ծրագրի շրջանակում սերմ ձեռք բերելու համար շահառուն մատակարարին է ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը (պատճենը), անշարժ գույքի (ցանքատարածություն համարվող հողամասի) նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի (սեփականություն, վարձակալություն, օգտագործում) պատճենը(ները), և (կամ) նոտարական կարգով վավերացված՝ սեփականատիրոջ (համատեղ և (կամ) բաժնային սեփականություն հանդիսացող հողամասերի մասով՝ բոլոր սեփականատերերի) համաձայնությունը՝ հողատարածքում ցանք կատարելու վերաբերյալ, և (կամ) համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք՝ հողատարածքը շահառուի կողմից փաստացի օգտագործելու վերաբերյալ:

(20-րդ կետը փոփ. 30.07.2020 թիվ 1270-Լ որոշում)

21. Շահառուն (բացառությամբ իր իսկ կողմից ներկրված սերմերով ցանք կատարելու դեպքի) սերմ ձեռք բերելու համար գումարը փոխանցում է մատակարարի հաշվեհամարին և փոխանցումը հավաստող փաստաթղթի պատճենը տրամադրում մատակարարին:

22. Մատակարարը վաճառված սերմերի դիմաց սուբսիդիա կամ փոխհատուցում ստանալու նպատակով՝ մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով դիմում է նախարարություն՝ կից ներկայացնելով վաճառված սերմերի վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն նախարարության կողմից սահմանված ձևաչափի, սերմերի հավաստագրերի պատճենները, սույն ծրագրի 20-րդ և 21-րդ կետերում նշված փաստաթղթերը, ինչպես նաև ներմուծումը և Ծրագրի շրջանակում սերմերի ներմուծումը ավելացված արժեքի հարկով հարկվելը կամ չհարկվելը հավաստող փաստաթղթերը (ներմուծման դեպքում):

(22-րդ կետը փոփ. 27.05.2021 թիվ 871-Լ որոշում)

23. Մատակարարը (իր կողմից արտադրված կամ ներմուծված) և շահառուն (իր կողմից ներմուծված) սերմերով ցանք կատարելու դեպքում սուբսիդավորում կամ փոխհատուցում ստանալու նպատակով մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով դիմում են նախարարություն՝ կից ներկայացնելով ցանված սորտերի սերմերի, քանակի վերաբերյալ տեղեկությունները, սույն ծրագրի 20-րդ կետում նշված փաստաթղթերը, սերմերի հավաստագրերի պատճենները, ինչպես նաև ներմուծումը և Ծրագրի շրջանակում սերմերի ներմուծումը ավելացված արժեքի հարկով հարկվելը կամ չհարկվելը հավաստող փաստաթղթերը (շահառուի և մատակարարի կողմից ներմուծման դեպքում):

(23-րդ կետը փոփ. 27.05.2021 թիվ 871-Լ որոշում)

24. Դիմումը ստանալուց հետո նախարարությունը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ճշգրտում շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, որի հիման վրա կազմվում է արձանագրություն և տեղեկացվում մատակարարին և շահառուին (իր կողմից ներմուծված սերմերով ցանք կատարելու դեպքում) սուբսիդիայի կամ փոխհատուցման տրամադրման կամ մերժման մասին (մերժման հիմք է հանդիսանում մատակարարի՝ ծրագրով, պայմանագրով և հուշագրով, և շահառուի՝ ծրագրով, իրենց վերապահված պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը):

25. Սուբսիդավորման կամ փոխհատուցման դեպքում մատակարարի և շահառուի (իր կողմից ներմուծված սերմերով ցանք կատարելու դեպքում) հետ 10 աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է սուբսիդիայի կամ փոխհատուցման տրամադրման պայմանագիր, որից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում սուբսիդավորման կամ փոխհատուցման գումարը փոխանցվում է համապատասխան հաշվեհամարներին:

26. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է նախարարությունը:

27. Վաճառքի ամբողջ գործընթացի ժամանակահատվածում նախարարության կողմից կարող է իրականացվել մոնիթորինգ մատակարարների և շահառուների մոտ:

28. Ծրագրի շրջանակում պարտադիր մոնիթորինգ կիրականացվի շահառուների և ցանք կատարող մատակարարների մոտ մինչև հաջորդ տարվա մայիսի կեսն ընկած ժամանակահատվածում:

29. Եթե նախարարության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում պարզվում է, որ շահառուն և ցանք կատարած մատակարարը խախտել են ծրագրի և պայմանագրի դրույթները, ապա սուբսիդավորված կամ փոխհատուցված գումարը շահառուի և ցանք կատարած մատակարարի կողմից 1 ամսվա ընթացքում ենթակա է վերադարձման նախարարությանը:

30. Ծրագրի 28-րդ կետով նախատեսված մոնիթորինգի ավարտից հետո 2 ամսվա ընթացքում կազմվում է հաշվետվություն, որը պետք է ներառի տեղեկատվություն՝ վաճառված սերմերի քանակի, ծրագրի շրջանակում ընդգրկված ցանքատարածությունների, արձանագրված խախտումների և այլնի վերաբերյալ:

31. Ծրագրի հնարավոր ռիսկերն են՝

1) մատակարարի կողմից անորակ սերմերի վաճառքը.

2) շուկայում առավել մատչելի գներով անորակ սերմերի առաջարկը.

3) որակյալ սերմերի օգտագործումը որպես պարենային ցորեն.

4) գնահատված պահանջարկից պակաս իրացվելիությունը.

5) եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով բերքի կորուստը:

32. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

33. Ծրագրի բյուջեն 2020 թվականի համար կկազմի 350,0 մլն դրամ (ըստ գնահատականների՝ ծրագրի շրջանակում 2020 թվականին սերմացուի պահանջարկը կկազմի շուրջ 5000 տոննա): Ծրագրի հետագա տարիների ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր բյուջետային գործընթացի շրջանակում բյուջետային հայտերի հիման վրա՝ տվյալ տարվա համար անհրաժեշտ չափով գումար հատկացնելու միջոցով:

34. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) հանրապետությունում ցորենի բերքատվության մակարդակի բարձրացում՝ շուրջ 30%.

2) ծրագրի շրջանակներում 2020 թվականին կիրականացվի շուրջ 17,0 հազար հա աշնանացան ցորենի ցանք:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

(գլուխը լրաց. 27.05.2021 թիվ 871-Լ որոշում)

35. Ծրագրի 22-րդ և 23-րդ կետերով նախատեսված Ծրագրի շրջանակում սերմերի ներմուծումը ավելացված արժեքի հարկով հարկվելը հավաստող փաստաթղթերը մատակարարների և շահառուների կողմից 2020 թվականի համար կարող են ներկայացվել մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:

36. Ծրագրի 25-րդ կետով նախատեսված սուբսիդիայի կամ փոխհատուցման տրամադրման պայմանագրում համապատասխան փոփոխությունների կատարումը, ինչպես նաև մատակարարի կամ շահառուի համապատասխան հաշվեհամարներին լրացուցիչ 1 կգ-ի հաշվով 20 դրամ գումարների փոխանցումը 2020 թվականի համար կարող են իրականացվել մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում օգտագործման թույլտվություն ունեցող
ցորենի սորտերի ցանկ

Հ/հ	Սորտի անվանումը	Հ/հ	Սորտի անվանումը	Հ/հ	Սորտի անվանումը
1.	ԱԹԳ-3512	28.	Էրիտրոսպերմում 80	55.	Պրոմոնթորի
2.	Ախթամար	29.	Ինտենսիվնայա	56.	Ռիմա
3.	Ակսինիտ	30.	Լալվարի 10	57.	Ռոստովչանկա 5
4.	Անի	31.	Լեբեդ	58.	Սաթենի 22
5.	Արա	32.	Լենինականի 5	59.	Սթիվենս
6.	Արագած	33.	Կոլլեգա	60.	ՍՆ-64 (ԱԹԳ-3516) (SN-64)
7.	Արայ	34.	Կոտայք	61.	Տաթև
8.	Արեգակ	35.	Կրասնոդար 99	62.	Տանաիս
9.	Արմիկ	36.	Կոռշկա	63.	Տանյա
10.	Արմյանկա 60	37.	Հայասի	64.	Տարոն
11.	Արմսիմ	38.	Մակար	65.	Վան
12.	Բալթազար	39.	Մերձավանի 149	66.	Վասսա
13.	Բատկո	40.	Միրիչ Վում	67.	Վարս
14.	Բեզոստայա 1	41.	Միրլեբեն	68.	Վեսթոն

15.	Բրիգանտինա	42.	Միրոնովսկայա 808	69.	Վիկտորիա
___	_____	___	_____	___	_____
16.	ԳԱԽ 5	43.	Մոսկվիչ	70.	Վյու-301 (W-301)
___	_____	___	_____	___	_____
17.	Գռացիա	44.	Յուբիլեյնայա 100	71.	ՈՒմանկա
___	_____	___	_____	___	_____
18.	Գռոմ	45.	Յուկա	72.	Գալգալոս տեղական
___	_____	___	_____	___	_____
19.	Դագդաշ	46.	Նաիրի 68	73.	Նորկունդիկ
___	_____	___	_____	___	_____
20.	Դոնսկայա բեզոստայա	47.	Նեմրութ	74.	Շիրակի 1
___	_____	___	_____	___	_____
21.	Դոնսկոյ սյուրպրիզ	48.	Նիրսա	75.	Շիրակի 2
___	_____	___	_____	___	_____
22.	Դվին	49	Նոտա	76.	Ջազգեր
___	_____	___	_____	___	_____
23.	ԵԳԿ 90	50.	Ոսկեհասկ	77.	Սարատովսկայա 55
___	_____	___	_____	___	_____
24.	Եսաուլ	51.	Պարադիզ	78.	Սետե ցերոս 66
___	_____	___	_____	___	_____
25.	Զաստավա Օդեսսկայա	52.	Պտիսնիզկա	79.	Սիլա
___	_____	___	_____	___	_____
26.	Էլթան	53.	Պրիկումսկայա 140	80.	Սյունիք
___	_____	___	_____	___	_____
27.	Էջմիածին 2700	54.	Պրիմա Օդեսսկայա	81.	Քրիստինե
._____.